133. ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ԱԽՊՈՐԸ ԴԱՐԴԸ

Մին թաքավորը շատ զուլում ա ինում։ Տրան էլ մին խրելունք, իմաստուն ախպերը ա ինում։ Ախպերը թաքավորը տունալան եռը սրա իրանեն ծիծաղ չի ուրվում։ Ախպորը ընդյունան ուրհաթին ըրած փիսոթոններն քշեր-ցիրեկ տրան տընդիլիս ըն ինում։ Թաքավորը ուրան ուրհաթին հվաքում ա, ասում.—Հու վըեր տըեսնա իմ ախպորը ծիծըղելիս, կյա՜ ինձ ասե, նրան ուրան շլըփկավը մին վըեսկն յըմ տալկան։

Թաքավորեն ախպերը հիշտեղ վըեր քյինում ար, շատ մարթիքյ հետան հըռաքաշ քյինում ին, տըեսնան ծիծաղում ա՞, թա՛ չէ։ Մին քանի տարե տի հետան քյինում ըն, տըեսնում, վըեր ծիծաղում չի։

Մին օր էլ էս թաքավորեն ախպերը քյինում ա բազար, օզում ա թա մըես ինքյ օնե, տըեսնում ա բզարումը մուրթոտած, խոզին ճոկ ա վըենը ծակած՝ վըենեն կախ տուված, էծին՝ ճոկ, վըխնարեն, դնեն, լոխ ճոկ-ճոկ։ Տա կախ-կախ ըրած լիշերեն եշում ա, քթըեն տակեն ծիծաղում...

Խաքարը դանատին հըսցնում ըն թաքավորեն, վըեր քու ախպերը սօրե էնհինչ տըեղը ծիծաղալ ա։

Թաքավորն ախպորը ծեն ա տամ, ըստիբում, վրեր ձիրան դարդն ասեն։ Հրբցնում ա, Թա պենը հինչումն ա՞, վրեր էսքան տարն ծիծաղալ չըս։

Վրեր շատ ըստիբում ա, ախպերն էլ Թա՝ հինչ կյե՞ղեմ, յիշեցն տրեսն մսեն տրեղը ամեն մին հեյվան ճոկ-ճոկ ձիրանց վրեններան ծակած, կախ տուված, ծիծրղեցեն։ Մրտրծրեցեն, գյիդա-ցն, վրեր մին օր էլ քու։ վրեննատ ըն ինդի ծրկրլական, կախ տան։